

Նելլի Ա. Թադևոսյան

«ՈՒՇԱՑԱԾ» ՎԱԶԳԵՆ ՇՈՒՇԱՆՅԱՆԸ՝

«Հեթանոսական» շարժման մատույցներում*

Բանալի բառեր – արևմտահայ գրականություն, սփյուռ-
քահայ գրականություն, «հեթանոսական» գրական շարժում,
Դանիել Վարուժան, Վազգեն Շուշանյան, Համբարձում Առա-
քելյան, «Ո՛վ Լալագե», քննադատություն, գեղեցիկի պաշ-
տամունք, ռոմանտիզմ:

1910-ական թթ. սկզբին արևմտահայ գրական կյանքը նշանավորվեց հեթանոսական ժամանակների նկատմամբ գրողների ու արվեստագետների սուր հետաքրքրությամբ: Շարժման գաղափարների շուրջ համախմբվեցին Դանիել Վարուժանը, Հակոբ Միրունին, Վահան Թեքեյանը, Լևոն Շանթը, Ահարոնը, Լևոն Էսաճանյանը, որոշ չափով և հակադրական երևութական ելագծով՝ Կոստան Զարյանը: Շարժման առաջնորդը, անշուշտ, Դանիել Վարուժանն էր, որ դեռևս 1912-ին Պոլսում հրատարակել էր «Հեթանոս երգեր» ժողովածուն: «Հեթանոսական» գրական շարժման ամբիոններ դարձան «Նավասարդ» (1913-ի աշուն) տարեգիրքը և «Մեհյան» (1914, հունվար-հուլիս) հանդեսը:

Նշենք, սակայն, որ մինչ «Հեթանոս երգերը» Վարուժանն արդեն անդրադարձել էր այդ նյութին ավելի վաղ լույս տեսած «Ցեղին սիրտը» ժողովածուում (Պոլիս, 1909), որտեղ ոչ միայն առանձին բանաստեղծություններ էին հատկանշվում հեթանոսական տարրերով («Նեմեսիսը», «Հայրենիքի ոգին», «Վահագն»), այլև խոսույն էին ժողովածուի թեմատիկ ընդհանուր ուղղության խորագրերը՝ «Բագինին վրա», «Կրկեսին մեջ», «Դյուցազնավեպեր»: Այնուհանդերձ, մեր համոզմամբ՝ հեթանոսական գրական շարժման սկիզբը ազդարարեց հենց «Հեթանոս երգեր» ժողովածուն:

Գրքում հեթանոսական և քրիստոնեական ժամանակաշրջանները դրված են կողք կողքի իբրև հաճույքի («Հեթանոս երգեր») և ցավի («Գողգոթայի ծաղիկներ») խորհրդանիշներ: Ընդ որում՝ Վարուժանի նպատակային իդեալը հեթանոսական դարաշրջանն է. նա երգում է անցյալի փառքը, ոգեկոչում հին աստվածներին՝ հաստատելով գեղեցիկի իշխանությունը: Իր ժողովրդի հերոսական անցյալի փառաբանումը նախ և առաջ միտված էր բարձրացնելու ազգային գիտակցությունը՝ չխուսափելով վրե-

Թ. (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (59), ԽԱՅԻ-ԱՆԱԳՐԱՆԵՐ, 2017
ՎԿՎ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.05.2017:

ժի և պայքարի կոչերից, ինչպես նաև, ոչ երկրորդական հանգամանք, յուրատեսակ բողոք էր նոր՝ դրամատիրական հասարակության դեմ: «Հեթանոս» գրողները ընդդիմանում էին իդեալներից զուրկ, «ապասերած» հասարակարգին և իբրև հակադրություն վկայակոչում նախաքրիստոնեական անցյալը՝ որպես մարդու և բնության միասնության, ազատության, տարերքի, գեղեցիկի խորհրդանիշ. «Մարդիկ սովոր էին միայն ցեղին չարչարանքը պատմել, ու անոր արցունքները: Ան (Դ. Վարուժանը – Ն. Թ.) այդ չարչարանքին մէջ ցեղին փառքը գտաւ, ու խորհուրդը անպատմելի ուժին, որով ցեղը յաղթեր էր դարերուն ու անոնց բերած սարսափներուն, ու պիտի յաղթեր վանն ալ: Ան բերաւ հին դարերը մեզի: Նոր օրերը մարդոց հոգիներուն մէջ մարեր էին ամէն տեսիլք ու թոխչք: Ան մեզի պատմեց հին օրերուն գեղեցկութիւնը, ու անունները աստուածներուն, որոնք մարդոց սրտին մէջ լոյս ու երազ կը թափէին երբեմն»¹,– հետահայաց նկատում է Հակոբ Սիրունին:

Նշենք, որ այս հանգամանքը շարժման տրամաբանությունը չի հանգեցնում կրոնական պայքարի. խնդիրը գեղագիտական հարթության վրա է: Գրողի կրոնական հայացքների և «բանաստեղծական հեթանոսություն» հասկացության տարբերությունը իրավացիորեն ընդգծում է սփյուռքահայ գրող և գրաքննադատ Գրիգոր Պըլտյանը. «Բանաստեղծը երբեք չէ փորձած հանգանակային յօդուածով մը, բանաստեղծական կիրարկումէն անկախ արձակով մը հեթանոսութիւնը տարազել: ...Բանաստեղծական հեթանոսութիւնը միշտ գրուած է բանաստեղծութեամբ»²:

Հեթանոսական շարժումը խորհրդանշեց արևմտահայ գրականության վերելքը, որի զորությունը կասեցրեց 1915 թ. աղետը: Ճիշտ է, Հակոբ Սիրունին Բուխարեստում վերանորոգեց «Նավասարդ»-ը՝ (1923–1926 թթ.) փորձելով «մարած» շարժմանը վերադարձնել կենսունակություն, սակայն այլևս առանց ստեղծագործական նախկին ներուժի: Այնուհանդերձ, հեթանոսական շարժման փիլիսոփայությունը շարունակում էր ազդեցիկ լինել գրական դաշտում՝ արտացոլվելով նաև հաջորդող սերնդի ստեղծագործություններում:

Հայրենի գրականագետ Սուրեն Դանիելյանը այս միտումը բնութագրում է որպես ածանցյալ երակ. «Կայ գրական «հեթանոսութեան» մի ուրիշ, «կողմնակի» կիրառություն, որ զուգընթաց նկատելի էր սփյուռքահայ և խորհրդահայ գրական յորձանքներում. դա Դանիել Վարուժանի հմայիչ ու տիրական կերպարն էր, որ բեկումն ու ծալալուծում էր հայ գրողների տարաբնոյթ ստեղծագործություններում»³:

Նշենք, որ Հակոբ Սիրունու «Նավասարդ» ամսագիրը դարձել էր հին և նոր սերունդները միմյանց կապող յուրատեսակ կամուրջ, որին սիրով աշխատակցում էր նաև ֆրանսահայ արձակագիր Վազգեն Շուշանյանը: «Նավասարդ» ամսագրում երիտասարդ գրողը ոչ միայն հանդես էր գալիս եղեռնից հետո գրական ասպարեզ եկած «նորեր»-ին ներկայացնելու հանձ-

1 Սիրունի Յակոբ, Դանիել Վարուժան, Պուքրէշ, 1940, էջ 165:

2 Պըլտեան Գրիգոր, Կրակէ շրջանակը Դանիել Վարուժանի շուրջ, Անթիլիաս-Լիբանան, 1988, էջ 35–36:

3 Դանիելեան Սուրեն, Արևմտահայ գրականություն. տիտանիկ թե՛ շարունակականություն, Եր., 2014, էջ 109:

նառությամբ, այլև իրեն հատուկ համարձակությամբ վերագնահատության էր ենթարկում ավագ սերնդի ժառանգությունը: Ավելացնենք նաև, որ պուր-րեշյան շրջանում Վ. Շուշանյանը դեռևս չափածոյի տիրույթում էր, և ան-ցումը արձակի ժանրին լինելու էր ավելի ուշ: Հետաքրքիր է այն հանգա-մանքը, որ «հեթանոսական» շեշտադրումները մեզ համար նաև նկատելի են «Նավասարդ»-ի էջերում: Բանաստեղծություններից մեկում Շուշանյանը ոգեկոչում է հին աստվածներին, ընդվզում նոր ժամանակների աստծո դեմ.

**...Աւանդ, աւանդ կը տիրեն արդ աստուածներ անպատիւ...
Ու ձեր փոխան մեհեանին մէջ կը դառնան լրկտի պար...⁴:**

Նշենք, որ Վ. Շուշանյանի «բանաստեղծական թոթովանքներն» այնքան խոսուն են, որ Հ. Սիրունին ոչ միայն գնահատում է սկսնակ գրողին, այլև փորձում է կանխագծել նրա ստեղծագործական հետագա ճանապարհը. «Յղկուելով, իր հոգին չարչարելով նոր տեսիլքներու և նոր ձևերու համար՝ այս տղան օր մը կը դառնայ գեղեցկութեան տաճարին դուռը բախտը կոչնակներէն մէկը»⁵:

Հեթանոսական գրական շարժման արձագանքները ցայտուն կերպով կերպով արտահայտված են Վ. Շուշանյանի առաջին գրքում՝ «Գարնանա-յին սիրո հեզ նամակներ» վիպակում (1928 թ): Այն արվեստագետի ներքին «օրագրային» փոթորկումների գեղարվեստական արտացոլումն է: Շու-շանյանը ընդվզում է նոր ժամանակների դեմ, որտեղ խաթարվել է մարդ-կային դիմագիծը, մարդը հեռացել է իր սկզբից՝ բնությունից, որի հե-տևանքով կորցրել է ոգեղենությունը, սպանել է ամենակարևորը՝ երազը. «Կ'ապրինք տխուր, ապաստած ու թանձր հասարակարգի մը մէջ: Ապուշ, անուրախ ու հին է մեր ժամանակը: ...Այնքան թանձրամարմին ենք ու առանց խանդավառութեան, որ աղուոր և մեծ աչքերով երազը առյաւէտ լքած է մեզ: Մեր յոյսերը մութ են ու առանց թոյլի: Յտորքներ չունինք: Մեր սէրերը հիւանդ են, գունաթափ ու հէք, մեր սրտերուն պէս որ կը հծծեն մութին մէջ, որ կը մսին»⁶:

Նշենք նաև, որ գրողի և ժամանակի անհաշտությունը տարիների վա-դեմություն ունի. դեռևս 1925 թ. «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն Դարբինյանին ուղղված նամակում մենք տեսնում ենք Շուշանյան արվես-տագետի և հասարակության «բախումը». «Մեր օրերուն մարդիկ չափա-զանց սինիք լիրբ ու իրապաշտ են: Նիւթականացած հաճոյքը ու անմիջա-կանն է միայն, որ գիրենք կը հրապուրէ: Հոգեկան վայելքներու փոխարէն նիւթական գուարծութիւններն են, որ կ'իշխեն: Հետևաբար, մարդիկ պա-տերազմէն առաջ ու մանաւանդ յետոյ դարձած են շատ թանձր»⁷:

«Գարնանային...»-ը ներկան մաքրագործելու ձիգ է. Շուշանյանը փոր-ծում է հեթանոս օրերի մաքրությունն ու երազը վերակենդանացնել նոր

4 «Նավասարդ» ամսագիր, Նոր Շրջան, Պուրբէշ, 1923, Ա հատոր, Թ. պրակ, էջ 270:

5 Նույնը, Նոր Շրջան, Պուրբէշ, 1923, Ա հատոր, Գ պրակ, նոյեմբեր, էջ 84:

6 Շուշանյան Վազգէն, Գարնանային սիրոյ հեզ նամակներ, «Էտվան» հրատ., Պէյրուֆ, 1956, N 23, էջ 17:

7 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1962, Խ տարի, N 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 20: Ավելացնենք, որ Վ. Շուշանյանը նամակում մեջբերում է Մորիս Պառեսի խոսքերը. «Մենք ծանր ենք և լաւ սնդա-ւորած»՝ այն դիտարկելով որպէս նոր ժամանակներին տրված լավագույն բնորոշում:

ժամանակներում: Վիպակի գլխավոր հերոսների անունները, բնականաբար, պատահական ընտրության արդյունք չեն. հեղինակը նրանց կնքում է հեթանոսական աստվածների՝ Աստղիկի և Վահագնի անուններով: «Գարնանային...»-ի հերոսների անգամ անունների ընտրության սկզբունքը սփյուռքահայ արձակագիր և գրականագետ Գեղամ Սևանը գնահատում է իբրև վարուժանյան հետագիծ. «Մովորական չեն և ընտրված անունները, որոնք մարմնացնում են վարուժանական հեթանոս խռովքը»⁸: Սա պատահական չէ, որովհետև ինքը, իբրև Վ. Շուշանյանի հավատարիմ աշակերտ, նույն ճանապարհով առաջնորդվել է իր վիպակներում. անգամ պոլսահայ պատկերներում կարող ենք հանդիպել Ռաֆֆիների, Վարուժանների և այլոց:

Այսպիսով, Շուշանյանը խաղարկում է հեթանոսական սիրո փառաբանությունը, և ոչ առանց Վարուժանի միջամտության:

Դ. Վարուժանը ոգեկոչում էր իր նախընտրած աստծուն՝ Վահագնին՝ ի հակադրություն քրիստոնեական գաղափարախոսության, որտեղ ուժի փոխարեն խեղճություն է, հաճույքի փոխարեն՝ ցավ, և կյանքի փոխարեն՝ մահ: «Մեռած» աստվածներից հենց Վահագնն է, որ «ապրելու և կռուելու արբեցումը կու տայ»⁹, և բանաստեղծը ծնկում է իր «հայրերու Աստծու» առջև՝ ապավինելով նրա գորությանը («Ո՛վ դու Վահագն, աստուածահայր գորութեան») ¹⁰: Նշենք նաև, որ Վարուժանը «Ցեղին սիրտը» ժողովածուի բնաբանը ևս «Վահագնի ծնունդ»-ից է վերցրել:

Վ. Շուշանյանի «Գարնանային...»-ում Վահագնը նույնպես խորհրդանշում է ազատ, հեթանոս սերը, մարմնական հաճույքը, գեղեցիկը, հաստատում տղամարդկային ուժի գերակայությունը. «Ուսով կործանենք արգելքները: Մեր զորաուր բազուկներով պառկեցնենք զանոնք մեր հեշտութեան ու սիրոյ անկողիններուն վրայ ու կեցցէ՛ հաճոյքը, կեցցէ՛ գեղեցկութիւնը որ կը հպատակի մեր զորութեան: Կեցցեն՝ հաճոյքի և հեշտութեան պահերը: ...Տիրենք գեղեցկութեամբ՝ յաւիտենական գեղեցկութեան ու գեղեցկութիւնը արուին մօտ՝ ուժին մէջ է»¹¹:

Եվ Վարուժանը, և՛ Շուշանյանը ոգեկոչում են Վահագնին և Աստղիկին՝ նոր ժամանակներում գեղեցկության, ուժի ու սիրո գաղափարը հաստատելու, քրիստոնեական հնազանդությունը, հաշտվողականությունը մերժելու համար: «Գարնանային...»-ում Վ. Շուշանյանը մի փոքր սրում է հարցադրումը՝ սուսեր ճոճելով նաև քրիստոնեության դեմ, որը, ըստ նրա, սպանեց մարդկային ուժի գիտակցությունը, մերժեց հաճույքը, ուրախությունը. «Նազովրեցին՝ տառապանքի, չարչարանքի, ինքնախարազանումի հասկացողութիւնը բերաւ մարդկութեան: Սէրը՝ որ իրմէ առաջ մեհեաններուն մէջ կը պատարագէր ու անտառներուն մէջ կը ցնծար՝ թաքչեցաւ

8 Գեղամ Սևան, Վազգեն Շուշանյան, Եր., ԳԱ հրատ., 1968, էջ 136:

9 Բնութագրումը Լևոն Շանթինն է, որի «Հին աստուածներ» դրաման (1909) հեթանոսական շարժման նախօրեին ամենից աղակախարույց և քննարկված արձագանքներից էր: Լևոն Շանթը ոգեկոչում է Վահագնին և Աստղիկին՝ փառաբանում կյանքն ու կռիվը, գեղեցկությունն ու սերը, մերժում «սրբապիղծների» վախկոտությունն ու թշվառությունը. («Դուն այն սրբապիղծը չեմ, որ կ'արհամարհես մարմինը, Վահագնի ու Աստղիկան այդ հրաշալի կերտուածքը»): Տես Լևոն Շանթ, Հին աստուածներ, տպ. «Արաքս», Պոլիս, 1912:

10 Գանիէլ Վարուժան, Ցեղին սիրտը, Մատենաշար «Ազդակ», Կ.Պոլիս, 1909, N 3, էջ 158:

11 Վազգէն Շուշանյան, Գարնանային սիրոյ հեզ նամակներ, էջ 77:

մութ ու բուրավետ խուցերու մէջ»¹²:

Ճիշտ այսպես՝ ավելի վաղ իր «Մեռած աստվածներուն» բանաստեղծության մեջ Վարուժանը ողբում է հին աստվածների մահը, նույն դառը տրամադրությամբ ընդունում քրիստոնեության հաղթանակը.

**...ես պարտուած, Արուեստիս դառըն սրբտէն
Կ'ողբամ ձեր մահն, ո՛վ հեթանոս աստուածներ:
Մեռան Խորհուրդն. և Բնութիւն է արիւնէր
Օրէնքներու կարկինին սուր սրլաքով:
Ձանձրոյթը մնաց, պրճնուած փուշ պըսակով
Մարդն է ինկած գարշապարին տակ հըսկայ
Խուլ Աստուծոյ մը հրեայ»¹³:**

Եվ Վարուժանը, և Շուշանյանը հին աստվածների անհիմն մահը դիտարկում են որպես մարդկային հասարակության խեղման վկայություն. «քաղաքակրթվելով» մենք բանտեցինք մեզ ի վերուստ տրված ազատությունը, դարձանք թույլ, չեզոք: Քշելով մեր քուրմերին, դատարկելով մեր մեհյանները՝ մենք հեռացանք մայր բնությունից՝ ճանապարհ հարթելով տգեղի համար. «Մենք սպաննած ենք սէրը: Մեհեաններն ու հեշտութեան պարտէզները դատարկած ու անոնց հրաշագեղ բնակիչները քշած՝ մեր գոբիներու ցեխին մէջ: Մեր բողատուներէն ներս»¹⁴:

Երկու արվեստագետներն էլ հեթանոսական «վերադարձը» դիտարկում են որպես փրկության նախադուռ՝ նոր ժամանակներում մարդկությանը ազատագրելու նոր հասարակարգի և կրոնական գաղափարախոսության կապանքներից. «...Վիրաւոր ու պղծուած Մագթաղենացի, արցունքոտ աչքերով քնքուշ ու յուսահատ Մարթա, աղուոր ու սգաւոր Մարիամ, էրբ, ըսէ, էրբ պիտի վերադառնաս Պիլիթիսի հրաշագեղ, ծիծղուն, անմեղ ու տենչանքէ ծաղկած մարմինին հեթանոսութեան, Ափրողիտէի գեղեցկաշունչ տեսիլքին: Այո՛, աշխարհը գէշ կը հոտի: ...ու բոլոր մեղքերը՝ բոլոր անառակութիւնները, բոլոր լկտիութիւնները գերազանցաբար մեր ստեղծագործութիւններն են»¹⁵:

Գորշ իրականությունից փախչելու և իրենց երագին փարվելու տենչն է, որ Աստղիկին և Վահագնին վեր է բարձրացնում առօրյայից, մարդկանց խառնամբոխից: Այս կերպարների միջոցով հեղինակը փորձում է մարտնչել ոչ միայն կյանքի տգեղությունների, այլև ազգային ինքնության կորստի դեմ՝ վերհանելով երբեմնի կորած գեղեցկությունները, որ «...եղեր էին և դեռ կային մեր ցեղին հոգւոյն խորերը»¹⁶: Սա նաև երկու հեղինակների մոտ վերաձում է մարդկության ազատագրության գաղափարին. Դ. Վարուժանի մոտ այն առանձնանում է ազգային շեշտադրումներով, ինչպես, օրինակ՝ «Նեմեսիս» բանաստեղծության մեջ, երբ տառապած և աշխատավոր ժողովուրդը դիմում է վրեժի աստվածուհուն՝ Նեմեսիսին՝ արյու-

12 Նույն տեղում, էջ 78:

13 Դանիել Վարուժան, Հեթանոս երգեր, Կ. Պոլիս, 1912, էջ 113:

14 Վազգէն Շուշանեան, Գարնանային սիրոյ հեզ նամակներ, էջ 78:

15 Նույն տեղում, էջ 79:

16 Յակոբ Սիրունի, Դանիել Վարուժան, Պուրբէշ, 1940, էջ 126:

նոտ պայքարով կերտելու համար ցանկալի ապագան.

**...Պիտ կործանենք ապարանքներ ու բանտեր՝
եւ քառանկին սալաքարերովն իրենց յաղթ
Պիտի բազինը՞ կանգնենք...¹⁷**

Վ. Շուշանյանը ևս հեղափոխության շեփորողն է, սակայն արձակագրի պայքարը դուրս է գալիս ազգային սահմաններից, ստանում համամարդկային հնչերանգներ. «Մեր մարմինը՝ սպիտակ ու տժգոյն, Նազարէթի Քրիստոսին տառապակոծ մարմնին պէս, առատ ու ճերմակ նաշիհի պէս, պիտի գոհենք՝ բոլոր ժողովուրդներու, բոլոր ցեղերու, բոլոր տառապողներու վերջնական ազատութեան համար: ...Պիտի կործանենք քար քարի վրա ձեր բոզատունները, ձեր սուտ ու կեղծ հեշտութեան արուեստական պալատները, պիտի կործանենք դիտապաստ էյֆելեան ձեր աշտարակները...»¹⁸:

Եվ Դ. Վարուժանը, և՛ Վ. Շուշանյանը արվեստը «ծառայեցնում են»՝ ժողովրդին պայքարի կոչելու, բռնակալությունների կործանման և ազատության գաղափարը սերմանելու համար: Սակայն երկու արվեստագետներն էլ հավատում են ապագայի լուսավոր տեսլականին, հավատում են «մաքրութեան առաօտին»՝ կատարյալ աշխարհի կառուցումին: Դեռևս 1910-ական թթ. գրված «Ո՛վ դար, ո՛վ դար» բանաստեղծության մեջ Վարուժանը կասկած չունի, որ գալու է «արդար հաղթանակի» ժամը. մարդկությունը խորտակելու է իրեն կաշկանդող շղթաները.

**Պիտի Աշխարհը ելլէ նորոգում՝ ու գեղեցիկ
Եվ պիտ' ըլլայ արժանի Արևին շուրջ դառնալուն՝
Ո՛վ Դար, ո՛վ Դար յուսագեղ, դու Մարդկութեան Առաօտ...¹⁹:**

Շուշանյանը ևս վստահ է, որ «Վաղը պիտի ըլլայ թռիչքի, բանաստեղծութեան ու հին և յաւիտենական արժէքներու անհրաժեշտ վերադարձի մը նախօրեակը: Վաղը կը պատկանի մեզի: Այսքան սրիկայութենէ, գոեկոյութենէ, հասարակ ու սովորական հաճոյքի օրերէ յետոյ՝ մաքրութեան առաօտ մը պիտի բացուի վրանիս»²⁰: Ահա այս գերագույն գաղափարի համար երկու արվեստագետները հակադրվում են իրենց ժամանակին, պայքարում նյութականացած աշխարհի, խեղված արժեքների դեմ:

1930 թ. Վ. Շուշանյանը կրկին վերադառնում է իր նախասիրած հեթանոսական նյութին. Կահիրեի «Հուսաբեր» թերթում լույս է տեսնում «Ամռան գիշերներ» վեպը: Նոր պայմաններում հայտնված սփյուռքահայ գրողի համար առաջնային են ազգային կեցության հիմնախնդիրները: «Ամռան գիշերներ»-ում Շուշանյանը նահանջի ահազանգը հնչեցնող արվեստագետն է: Նոր միջավայրում գերակա է օտար մշակույթը, որը աստիճանա-

17 **Դանիէլ Վարուժան**, Ցեղին սիրտը, Մատենաշար «Ազգակ», Կ. Պոլիս, 1909, N 3, էջ 18:

18 **Վազգէն Շուշանեան**, Գարնանային սիրոյ հեզ նամակներ, էջ 141:

19 «Երկունք» ամսաթերթ, Կ. Պոլիս, 1912, N 6-7, էջ 135:

20 **Վազգէն Շուշանեան**, Գարնանային սիրոյ հեզ նամակներ, էջ 49:

քար հեռացնում է մեզ մեր ակունքներից (հանձնվելով օտար կնոջ հմայքին՝ հայ տղան իրեն շրջապատել է օտար «առարկաներով»․ հնչում է **Շուպենի «Լեհականը»**, սեղանին դրված են թեյի **չինական** բաժակներ, և երիտասարդները կարդում են **Հ. Հայնեի «Երգերի գիրքը»**): Ի հակադրություն այս տրամաբանությանը՝ «Ամռան գիշերներ» վեպում Վ. Շուշանյանը ապավինում է Դանիել Վարուժանի ազգային գեղագիտության ուրվագծերին:

Դանիել Վարուժանի բանաստեղծությունները յուրատեսակ սիմվոլներ են դառնում Վ. Շուշանյանի համար՝ ավելի խորքային դարձնելով «Ամռան գիշերներ» վեպի հարցադրումները: «Հեթանոս երգեր» ժողովածուից «ընտրված» «Կղեպատրա», «Ո՛վ Լալագե», «Գեղեցկության արձանին», «Բանվորուհին» բանաստեղծությունները «օգնում» են շուշանյանական արձակին՝ վերհանելու ենթատողերում թաքնված ասելիքը: Կլեոպատրան ինքնին ենթադրում է գեղեցկություն, կիրք, իշխանություն: Վարուժանի համար Կլեոպատրան մարմնական սիրո, հաճույքի խորհրդանիշն է: Բանաստեղծը երկրպագում է թագուհուն, «սլանում» նրա հետ սիրո և մեղքի արահետներով²¹:

Սակայն վարուժանյան սիմվոլիկան «վտանգավոր է դառնում» նոր ժամանակներում նահանջականության հզոր ալիքի դեմ դուրս եկած սփյուռքահայ արձակագրի համար. Շուշանյանը Կլեոպատրային դիտարկում է այլ տեսանկյունից. «...մեղադր, գիտուն ու հեշտանքներու բոլոր տեսակներուն ծանօթ անառակ թագուհին»²² հանդես է գալիս որպես օտար կնոջ խորհրդանիշ: Ինչպես թագուհին «համբոյրով մը» ողջ Խալիան է նվաճում, նույն կերպ, որպես մի նոր Անտոնիոս, սիրո, սեռի թակարդն է ընկնելու նաև հայ տղամարդը. կլեոպատրաները «առանց բռնության» մեկընդմիշտ շղթայելու են նրան. «...Դանդաղօրէն ու առանց բռնութեան սկսած է իր ճաշակները, գաղափարներն ու սէրերը պարտադրել ինծի: Համբոյրով մը ընդդիմութիւնս կը խորտակէ ու քանի մը գգուանքներով՝ համաձայնութիւնս ծախու կ'առնէ»²³:

Սակայն Վ. Շուշանյանը յուրատեսակ խանդավառությամբ է վերադառնում դեպի «...աշնանային ողկոյցներով, գինեբոյր քաղցուով ու կրքոտ և տաքարին կիներու բուրումներով լեցուն երգը»²⁴, որտեղ սրբագործվում է սերնդագործելու, արարելու խորհուրդը:

Պատահական չէ, որ Վ. Շուշանյանը անդրադառնում է Դ. Վարուժանի աղմկահարույց՝ «Ո՛վ Լալագե» բանաստեղծությանը, որի մասին քննադա-

21 «Հեթանոս երգեր» ժողովածուի մասին քննադատական խոսքով հանդես եկած արևելահայ գրականագետ Հ. Սուրխաթյանը «Սեռական էքստագից դեպի լքումն ու յուսահատություն» խորագրով հոդվածում «Հեթանոս երգեր»-ի «կենտրոնը» դիտարկել է «միմիայն հեշտանքն ու տոփանքը», որն արտահայտում է հիմնականում արևելահայ գրագետների վերաբերմունքը: Գրականագետը նույնքան ծայրահեղ վերաբերմունք է դրսևորել նաև «Կղեպատրա» բանաստեղծության նկատմամբ՝ անտեսելով գեղարվեստական ընկալումները՝ այն դիտարկել է իբրև սեռականությունը բացարձակացնելու փորձ. «Ըստ Վարուժանի՝ սեռի խելագար թափը ընդունակ է պատմական ակտեր կատարելու»: («Մշակ», Թիֆլիս, 1913, 12 հուլիս, N 151):

22 **Վազգէն Շուշանեան**, Ամրան գիշերներ, Մատենաշար «Յուսաբեր», N 24, Գահիրէ, 1930, էջ 11:

23 Նույն տեղում, էջ 46:

24 Նույն տեղում, էջ 12:

տական խոսքով հանդես եկան Ա. Շիրվանզադեն²⁵, Ա. Բարսեղյանը²⁶, Հ. Սուրխաթյանը: Վարուժանի գեղագիտական ընկալումները մտավորական որոշ փաղանգի համար անհասկանալի էին, անընդունելի. Վարուժանն այլևս իրենց համար «մի ուն բանաստեղծ էր», հասարակ «պոռնկագիր»:

Վ. Շուշանյանը տարիների հեռավորությունից ոչ միայն գնահատում է ծայրահեղ բնութագրումների արժանացած բանաստեղծությունը, այլև ընդգծում գրականության մեջ իր համար ընդունելի չափանիշները: Անդրադառնալով «Ո՛վ Լալագե»-ի առթիվ ծավալված քննադատություններից մեկին՝ արձակագիրը չի թաքցնում իր վերաբերմունքը. «Ես հիմա կը յիշեմ՝ արևելահայ քինախնդիր ու հատուածական հրապարակագրի մը թունտ տողերը՝ ճիշդ այս գեղեցիկ երգին պատճառով՝ հանդիսաւոր ու լուրջ թերթի մը մէջ: Վրէժխնդիր ու արդար գնդակ մը՝ արդարութիւն ըրաւ նաև բանաստեղծին՝ մարդը փռելով գետին»²⁷:

Նշենք, որ խոսքը հասարակական-քաղաքական գործիչ, «Մշակ» թերթի խմբագիր (1913-1918) Համբարձում Առաքելյանի մասին է: Հետաքրքիրն այն է, որ «Անուան գիշերներ»-ում Շուշանյանը «խնայում է» հրապարակագրին՝ զանց առնելով անունը, մինչդեռ 1930-ական թթ. գրված «Ալեկոծ տարիներ»²⁸ ստեղծագործության մեջ «Գրգռության կարմիր լաթը» վերնագրված հատվածում Վ. Շուշանյանը «բացում է փակագծերը», նշում

25 Հակոբ Սիրունու բնութագրմամբ՝ «Հեթանոս երգեր» ժողովածուն «ցնցել է հայ միտքը». ընդ որում՝ բուն քննարկումների առիթ է դառնում ոչ միայն ժողովածուն, այլև նրա առանձին բանաստեղծություններ, որոնց թվում՝ «Ո՛վ Լալագե» բանաստեղծությունը: «Ո՛վ Լալագե»-ի շուրջ «աղակարարներից» մեկը Շիրվանզադեն էր, որը Դ. Վարուժանին մեղադրում էր պոռնկագրության մեջ՝ իր գնահատություններում անցնելով անգամ տարրական պատշաճության սահմանը. «Դա արդեն պոռնկագրություն չէ, այլ կատարյալ պոռնկություն: Եվ ահա Դանիել Վարուժանի պէս էրոտոմանները մեզ իրենց պոռնկության նմուշները ծախում են բանաստեղծութեան տեղ...: Ոհ, մարդու փխսանքն է գալիս այդ տեսակ գոեհիկ, կոպիտ, ամոթից ու ամենատարրական ճաշակից գուրկ «բանաստեղծների» գործերը կարդալիս»: (Շիրվանզադե, Երկերի ժողովածու 10 հատորով, հատ. 10, եր., «Հայպետհրատ», 1962, էջ 476):

26 1913 թ. ապրիլի 16-ին Պոլսում կայացած «Հեթանոս երգեր» ժողովածուի գրական ասուլիսի ժամանակ քննադատական սուր խոսքով հանդես է գալիս դոկտ. Արմենակ Բարսեղյանը: Չնայած այն հանգամանքին, որ Դ. Վարուժանին համարում է տաղանդավոր բանաստեղծ, Բարսեղյանը շրջանցում է ժողովածուի գեղարվեստական հանգամանքները, և վարուժանյան սիրո և տառապանքի երգերը դիտարկում իբրև գոեհիկության արտահայտություն. «Ամենաքննադատելի կէտը սակայն «Հեթանոս երգեր»-ու մէջ՝ դէպի կինը արտայայտող սէրն է: ...Առէք, օրինակ, «Հեթանոսական»-ի չերբէգուիին, «Հարձ»-ի և «Ո՛, Տալիթա»-ի հերոսուհիները, «Ո՛վ Լալագե»-ի եթովպուիին, «Արևելեան բաղանիք»-ի կանանց վերաբերեալ նկարագրութիւնները, ասոնց հետ մէկտեղ նկատի առէք այր մարդու կողմէ արտայայտուած ցանկութիւնները յիշեալ բոլոր թերթուածներուն մէջ, և դուք կը համոզուիք, որ «Հեթանոս երգեր»-ու մէջ ո՛չ թէ սէր ու գեղեցիկի պաշտամունք կայ, այլ միայն կիրք ու տոփանք, այն ալ միայն այր մարդու համար»: («Գրական ասուլիսներ» Գ., Դանիել Վարուժանի «Հեթանոս երգեր»-ը, Կ. Պոլիս, 1913, էջ 39): Բնական է, որ Ա. Բարսեղյանը ժխտական վերաբերմունքի մեջ չէր կարող նկատել Ֆիզիկականի առողջ հունը և ամենայն խորհրդավորն ու գեղեցիկը դիտում է իբրև անբարո և հակագեղարվեստական: Իրականում Դ. Վարուժանի համար Տալիթան և մյուսները ավելի բարոյական են, քան Ծերակույտի անդամներին տրվող դահլիճների կանայք, իսկ նույն Տալիթայի մեջ պարզ ու նվիրական զգացումն է՝ թեկուզ կրքի բնական հանդերձով:

27 Վազգէլ Շուշանյան, Ամրան գիշերներ, էջ 12:

28 Նշենք, որ «Ալեկոծ տարիներ» ծավալուն ստեղծագործությունը ներկայացնում է Վ. Շուշանյանի կյանքի 1920-1935 թթ. ընկած ժամանակահատվածը: Երկար տարիներ Վ. Շուշանյանի ստեղծագործական «ծալքերը» բացահայտող այս ստեղծագործությունը շարունակում էր մնալ հիմնականում ձեռագիր վիճակում և ամբողջությամբ հրատարակվել է գրողի մահից շուրջ յոթասուսու տարի հետո՝ 2014 թ., Մինրեալում, «Համազգային»-ի մատենաշարով: Ավելացնենք, որ «Գրգռության կարմիր լաթը» հատվածը ընդգրկվել է Վ. Շուշանյանի «Բանաստեղծն ու կինը» հատորում (Եր., 2005): Գրությունը որոշ փոփոխություններով (խորագրից սկսած՝ «Կարմիր լաթը») լույս է տեսել նաև Պոլսի «Ազդարար» օրաթերթում (տե՛ս «Ազդարար», Կ. Պոլիս, 1935, N 2773, 31 դեկտեմբեր):

ժամանակին Դ. Վարուժանի նկատմամբ «անհանդուժողականություն» դրսևորած երկու մտավորականների անունները. «Պատերազմէն առաջ Վարուժանն էր, որուն զմայլելի Լալազէն մարդիկ կը համարձակէին ցելիսին մէջ թաթխել, վասնզի չէին հասկնար: Ու մտածել թէ այդ ամբարիշտներէն երկուքը համալսարանականներ էին,- բժ. Կ. Փաշաեանը՝ Պոլիս ու Համբարձում Առաքելեանը՝ Թիֆլիս: Յեղափոխական վրէժխնդիր գնդակ մը քիչ մը արդարութիւն ըրաւ բանաստեղծին, Առաքելեանը դիտապաստ գետին փռելով»²⁹:

«Ամռան գիշերներ» վեպում ինքնանպատակ չէ նաև «Գեղեցկության արձանին» բանաստեղծության մեջբերումը: «Գեղեցկության արձանին» երկրպագելով՝ Վ. Շուշանյանը՝ որպես արվեստագետ, հաստատում է վարուժանյան գեղագիտության նկատմամբ իր հավատարմությունը: Արձակագիրը ևս արվեստում կարևորում է գեղեցիկի առկայությունը, տրվում անմատչելիության խորհրդին՝ տառապանքը դիտարկելով որպես իրական արվեստի բաղադրիչ. «Ահա կեցած եմ արձանական մերկութեան մը առջև ու շշուկ մը կը բարձրանայ խոտերէն ու ծոթրիններէն, ռեհանի ծղօտներէն և անանուխի ծիւրերէն՝ ու կ'ըսէ ինծի – ծռէ՛, ծռէ՛, ինչպէս երգիչը կ'ըսէր, վայրահակ ու կործանած, տառապէ՛ «գեղեցկութեան արձանին» առջև»³⁰:

Նշենք, որ Վ. Շուշանյանը իրականի և անմատչելիության խորհուրդների միջև երկատված արվեստագետն է:

«Բանվորուհին» բանաստեղծությունը ևս առանցքային է աշխատավոր-բանվոր արձակագրի համար. հերոս-հեղինակը խոստովանում է. «Ես երբ փոքր էի ու կ'արտասանէի այս երգը՝ ամէն անգամ սիրտս անորոշ սեղմումով մը կը կծկուէր ու անօրինակ զօրութեամբ մը կը զգայի աշխատատեղի մարդոց անասելի տառապանքը»³¹: Արձակագրի համակրանքը չորրորդ դասակարգի նկատմամբ բնորոշվում է ակտիվ դիրքորոշմամբ, հեղափոխական կեցվածքով: «Բանվորուհին» բանաստեղծությունը գալիս է վկայելու, որ վարուժանյան «Գողգոթայի» ճանապարհը Վ. Շուշանյանի համար ճշմարտության ճանապարհն է:

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք, կարող ենք արձանագրել, որ Շուշանյանի աշխարհայացքը, գաղափարական դիրքորոշումը, մի խոսքով՝ Շուշանյան արվեստագետը, ձևավորվել է նաև Դանիել Վարուժանի բարերար «միջամտությամբ»: Հետևելով Դ. Վարուժանի գեղագիտությանը՝ Վ. Շուշանյանը գեղեցիկի, մաքրության, ոգեղինության ակունքը գտավ հեթանոսական շեփորումների մեջ «սիրուած բանաստեղծի մը պարտէզէն ներս»³² բացահայտելով երկու արվեստագետների գրական խոր առնչությունը և ապացուցելով, որ ինքը «հեթանոսական» շարժման ամենից «ուշացած» արվեստագետն է, ձիշտ այնպես, ինչպես Մուրացանը, որը դիտվում էր իբրև «ուշացած» ռոմանտիզմի բարձր արտահայտություն:

29 Վազգէն Շուշանեան, Ալեկոծ տարիներ, «Օշական» մատենաշար, Մինթրէպ, 2014, էջ 291:

30 Վազգէն Շուշանեան, Ամրան գիշերներ, էջ 12:

31 Նույն տեղում, էջ 13:

32 Նույն տեղում, էջ 11:

Նելլի Ա. Թադևոսյան – գիտական հետաքրքրությունների շրջանակը հայ նոր և նորագույն գրականությունն է, մասնավորապես արևմտահայ և սփյուռքահայ գրական դեմքերը: Գիտական պարբերականներում հրատարակել է սփյուռքահայ հեղինակներին նվիրված երկու հոդված:

Summary

THE «LATE» VAZGEN SHUSHANIAN In front of the ports «pagan» movement

Nelly A. Tadevosyan

Key words – Western and Diaspora literature, the «pagan» literary movement, Daniel Varuzhan, Vazgen Shushanian, Hambardzum Araqelyan, «O, Lalage», criticism, worship of beauty, romanticism.

The article presents the main concepts of the «pagan» literary movement, particularly, the positive influence of the movement leader, great Western-Armenian writer Daniel Varuzhan on French-Armenian novelist Vazgen Shushanian's creative system. Examining V. Shushanian's «Gentle Letters of Spring Love» and «Summer Nights» we attempt to demonstrate the deep literary relationship between the two artists, along with analyzing D. Varuzhan's «pagan» heritage program.

Резюме

«ОПОЗДАВШИЙ» ВАЗГЕН ШУШАНЯН На подступах «языческого» движения

Нелли А. Тадевосян

Ключевые слова – западноармянская литература, литература армянского зарубежья, «языческое» литературное движение, Даниэл Варужан, Вазген Шушанян, Амбарцум Аракелян, «O, Лалаге», критика, поклонение красоте, романтизм.

В статье представлены основные положения «языческого» литературного движения, в частности, благотворное влияние лидера этого движения, величайшего западноармянского поэта начала прошлого столетия Даниэла Варужана на творческую систему прозаика армянского зарубежья Вазгена Шушаняна. Изучая его романы «Кроткие письма весенней любви» и «Летние ночи» и проводя параллели с «языческим» программным наследием Даниэла Варужана, мы попытались выявить глубокие литературные связи между двумя крупными художниками слова.